


ՄԱՍԼՈՅ ԱՐՁԱԿՈՒՐԴ

Ս. Յարութեան հրաշափառ տօնին առիթով, «ԱՐԱՐԱՏ» ջերմապես կը շնորհալուր էր ընթերցողները, աշխատակիցները եւ բարեկամները: Այս առիթով, «ԱՐԱՐԱՏ» պիտի ունենայ տօրեայ արձակուրդ: Մեր յաջորդ թիւը՝ Չորեքշաբթի, 3 Ապրիլ 2024-ին:



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ Ս. ՉԱՏԿՈՒՄՆ ՊԱՏՊԱՐԵՐ Է

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՎԻ Ի ՄԵՌԵԼՈՅ

Քրիստոս յարեալ ի մեռելոց: Ամուր հաւատքով շաղախուած ու հոգեւոր ցնծութեամբ լեցուն ա՛յս վկայութեամբ քրիստոնէաներ զիրար կ'ողջունեն ու աշխարհին կ'աւետեն հրաշափառ յարութիւնը Աստուծոյ Որդւոյն: Սա սովորական արտայայտութիւն մը չէ, այլ քրիստոնէական կրօնի եւութիւնը կազմող հաւատքի վրեժն ու պատմական անհերքելի իրողութեան վրայ հաստատուած: Արդարեւ, հաւատքի այս վկայութեամբ առաքելներ Երուսաղէմէն դուրս հին աշխարհի գանազան շրջաններուն մէջ, Նաե՛ւ Յայաստանի, իսպայեղ, թաղեալ ու յարուցեալ Քրիստոսը քարոզեցին եւ եկեղեցիներ հիմնեցին: Հաւատքի ա՛յս վկայութեամբ հզօրացած, եկեղեցին քաջութեամբ դիմագրաւեց պատմութեան բոլոր արհաւիրքները: Քրիստոսի հրաշափառ յարութեան տօնը հինգ յիշեցումներ կը կատարէ: Յիշեցումներ, որոնք պետք է արմատանան մեր կեանքին մէջ: Առաջին, Քրիստոսի յարութիւնը առանցքն է մեր հաւատքին:



Քրիստոսի յարութեան դէպքը թեական նկատող նորարար թրիստոնէաներուն, Պօղոս Առաքեալ կ'ըսէ՝ **"Եթէ Քրիստոս յարութիւն առած չէ՝ զ՛որ է մեր քարոզութիւնը, զ՛որ է Նաեւ ձեր հաւատքը"** (Ա. Կր 15.14): Քրիստոսի յարութիւնը աղբիւրն է քրիստոնէայ մարդուն հաւատքին, անոր վաերականութեան ու գօրութեան: Քրիստոսի յարութեան վրայ հիմնուած է եկեղեցին, որպէս Քրիստոսի խորհրդական մարմինը: Քրիստոսի յարութեան հաւատքով կը կենսագործուի եկեղեցւոյ առաքելութիւնը: Երկրորդ, Քրիստոսի յարութիւնը յաղթանակն է կեանքին: Եկեղեցին շարականներուն ու աղօթքներուն ճամբով Քրիստոսի յարութիւնը կը բնորոշէ որպէս յաղթանակ մահուան դէմ: Սա հիմ, այլ խօսքով՝ չարը, մեղքը ու սատանան, ըլլալով մարդու փրկութեան դիմաց կանգնող արգելք, Քրիստոս իր մահով յաղթեց մահուան, **"Մահուամբ զմահ կոխեաց"** եւ իր խաչով յարութիւն կերտեց: Առաքելը կը հաստատէ, թէ Քրիստոս իր յարութեամբ **"Մեզի յաղթանակ պարգեւեց"** (Ա. Կր 15.57): Այդ յաղթանակը յաւիտենական կեանքի յաղթանակն է մահուան դէմ: Երրորդ, Քրիստոսի յարութիւնը երաշխիք է մարդու յարութեան: Առաջին Ադամով մահը մուտք գործեց աշխարհ, իսկ երկրորդ Ադամով, Քրիստոսով՝ յարութեան յոյսով շաղախուած կեանքը: Այլ խօսքով, **"Ինչպէս մարդով մը սկիզբ առաւ մահը, նոյնպէս մարդով մը սկիզբ կ'առնէ մեռելներու յարութիւնը"** (Ա. Կր 15.21): Քրիստոս իր յարութեամբ մարդը մահուան տիրապետութենէն ազատագրեց եւ յարուցեալ կեանքի յոյսը տուաւ: **"Քանի մէջ մեռաւ Քրիստոսի հետ, կը հաւատանք թէ Նաեւ անոր հետ պիտի ապրինք"** (Ռո 6.8), նորոգեալ կեանքով, որպէս մահէն կեանքի ելած

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵՐՍ ՏԱՆԸ ԿԵԼԻԿՈՒՆՅՈՒՆ
(Ծաղ.ը տեսնել 4րդ էջ)



«Մի՛ վախնաք, քանզի գիտեմ թէ կը փնտռեք Յիսուսը որ խաչուեցաւ»:
Սատրճառ 28.5

ՎԵՐԱԳՏՆԵԼՈՎ ՄԵՐ ՀՈԳԻՆ

Աւետարաններու պատմութիւնները հարուստ են վկայութիւններով, յորդորներով եւ իրադարձութիւններով, որոնք մէջ զարմանքն ու ակնածանքն, երկնային միջամտութիւնն ու հրաշքը կերտողական դիրք կը գրաւեն: Մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի երկրային առաքելութեան վերջին շաբաթը աւագ է խոր իմաստներով, եւ կ'աւարտի մեռելներէն յարութեան հրաշքով, որովհետեւ կը կատարելագործուի Աստուծոյ շնորհալի եւութիւնը ներկայացնող փրկագործութեան ծրագիրը: Իսկ շնորհընկալ հաւատացեալի անդարարքը միշտ կը պարփակէ իր մէջ անկեղծ զարմանքն ու երկիրը: Հաւատացեալը կը գտնէ Աստուծոյ ներգործութեան մէջ փրկարար անակնկալ եւ կը խոնարհի անոր անպատմելի մեծութեան առջեւ: Այս իմաստով, պահ մը կասկածող թովմաս Առաքելի հաւատքի արտաբերի խոստովանութիւնը գեղեցկօրէն կ'ամփոփէ եկեղեցւոյ կեցուածքը Յարուցեալ Փրկչին նկատմամբ երբ ան կ'ըսէ՝ «Իմ Տէրս, եւ իմ Աստուածս» (Յովհաննու 20.28): Աւտարակոյս, մեր անհամազայտ արդիական ժամանակներուն մէջ, երբ նորարար ստեղծած գիտութիւնները կ'արձանագրեն մեծաթիւ բարեկատու գործառնումներ, կայ մարդկային իրադարձութիւն մը, որ հետզհետէ կը կորսնցնէ իր ներգործութիւնը: Իրօք, կը շոգիանայ հրաշք ակնկալելու, վեհութեան առաջ ահ ու ակնածանք արթնլու, կեանքի ու անոր խորհրդաւորութեան եւ միաժամանակ անմիջականութեան իրականութիւնը վայելելու ուժեղ մարդկային զգայնութիւնը: Երբ մեքենայաց մարդը կը դառնայ հետզհետէ աւելի ինքնամոփոխ, կեանքի բազմաչափութիւնը կը սահմանափակուի եւ կեանքի խորքի եւ լայնքի նկատմամբ անտարբերութիւնը կը գրաւէ անձին կեցողը: Այս պատճառով, մեր ժամանակներու ախտերու հիմնականը կը նկատուի հեռացումը հաւաքականէն, եկեղեցական հաղորդակցութենէն, ազգայինէն, ընտանեկան ջերմութենէն, նոյնիսկ պարզ համամարդկայինէն: Եւ մարդը կը մնայ վախի գերին:



ԱՅՍՕՐ ՄԱՐԴԿԱՅԻՆԸ Կ'ԻՅՆԱՅ ՈՒ ԿԸ ՊԱՐՏՈՒԻ, ԻՍԿ ԱՏԱՌՎԾԱՅԻՆԸ ԿԸ ՅԱՂԹԷ ՈՒ ԿԸ ՓԱՅԼԱՏԱԿԷ

Չատկական տօնին առիթով, դարձեալ մեր եկեղեցիներէն ներս հանդիսարարապէս կը հռչակենք մեր Փրկչին՝ Յիսուսի Քրիստոսի Սուրբ Յարութեան աւետիսը, որպէսզի այդ հրաշալիքով ոգեւորուած, մեր կեանքը տանինք նոր առաքելութիւններու:

Նուիրական այս առիթով, մեր ժողովուրդի հաւատացեալ գաւազները գէթ պետք է յիշեն, թէ մեր Տէրն ու Փրկիչը մեզի հետ ապրեցաւ երկրաւոր պայմաններու մէջ եւ մեր վիճակը ուղղելու ու մեզ իր յարուցեալ կեանքին տանելու համար խաչուեցաւ ու թաղուեցաւ:

Հետեւաբար, գէթ այսօր պետք է զգանք, թէ Աստուած ո՛չ անցեալի պատմութիւն է եւ ո՛չ ալ ապագայի մշուշին մէջն յայտնուող պատկեր: Ընդհակառակը, Ան ներկայ է մեր կեանքի իրականութեան մէջ, որպէսզի իրմով մենք կարենանք լոյս ու պայծառութիւն բերել տեսակաւոր հարցերով ծանրաբեռնուած ու մթազանծ մեր գիտակցութեան ու մեր կեանքին: Արդարեւ, Յիսուս միայն աւետարանական յիշատակ ու պատմութիւն չէ, այլ՝ մեր Փրկիչը, որ կորսուած ռեալարը փնտռելու ու փրկելու առաքելութեամբ աշխարհ եկաւ: Այդ ճշմարտութիւնը, այսօր պետք է սրտապահել մեզ ու մեր կեանքը ուղղել դեպի յաւերժը, որպէսզի զգանք, թէ այսօր դեպի երկինքն ու դեպի Աստուած ճամբայ մը կը բացուի մեր դիմաց: Հետեւաբար, իբրեւ Քրիստոսի հետեւորդներ, պետք է քրիստոնէական կեանքի մը վիճակը վերակենդանացնենք մեր մէջ եւ յոյս ու լոյս ցոլացնելով մեր շրջապատէն ներս, մեզի վստահուած պարտականութիւնները կամքով ու քաջութեամբ կատարենք:

Աւետարանը կ'ըսէ, թէ Չատկական տօնին առիթով Վերեստան մէջ տեղի ունեցող Վերջին Հնարքի պահուն, Յիսուս, իր մտաւորական մահուան մասին խօսելէ ետք, խռոված հոգիներով իր շուրջ բոլորուած իր աշակերտները սրտապաշտելու համար ըսաւ.՝

«Սաղաղութիւն կը թողում ձեզի. իմ խաղաղութիւնս է, որ կու տամ ձեզի... Իր այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է: Մի՛ խռովեք ու մի՛ վախնաք»:

Յովհ. 14:27

Աւետարանով փոխանցուածները գիտնալով բարարք չէ: Արդարեւ, մեր գիտածը արժէք ունի, եթէ իսկապէս պատճառ կը հանդիսանայ, որ մեր մէջ հոգեկան ձգտում մը յառաջանայ ու ծաւալի: Հետեւաբար, պետք է Աւետարանէն մեր ընդունածը գործի ու կեանքի վերածելու եւ այդպիսով Նաեւ մեր ընկերութիւնն ու շրջապատը աստուածայինով ողորկենք: Այդ է քրիստոնէայի կոչումը աշխարհէն ներս եւ, հետեւաբար, այդ նպատակին ծառայելու առաջադրանքով գէթ պետք է մեր անմիջական միջավայ-

րը, մեր տունն ու ընտանիքը յարութեան տեսիլքով խանդավառեցէ եւ Տիրոջ փրկաւետ խօսքերով մեր հարազատներուն հոգին խորխորանէք, բոլորին յիշեցնելով, թէ մեր Տէրն ու Փրկիչը մեզ կ'ըսէ: «Մի՛ խռովեք ու մի՛ վախնաք»:

Սիրելի հաւատացեալներ,

Այսօր Չատիկ է մեր կեանքէն ներս: Հետեւաբար, այսօրը առաւելաբար կը վերաբերի մեզի: Արդարեւ, Ս. Յարութեան յիշատակը կը նշենք առաւելաբար մեր սեփական, մեր ընտանեկան, մեր համայնական ու ազգային կեանքին օրհնութիւն, հոգեւոր եռանդն ու նոր աշխուժութիւն բերելու առաջադրանքով: Այսօր Չատիկ է: Աւետարանը կը պատգամէ, թէ այսօր, մարդկայինը կ'իյնայ ու կը պարտուի, իսկ աստուածայինը կը յաղթէ ու կը փայլատակէ: Այդ իրողութեան փաստը պետք է մանաւորաբար զգանք սրտմտութեան, անմեղի դժուարութիւններու, մտահոգութիւններու ու կասկածներու մթնոլորտին մէջն անցնող մեր ներկայ վիճակին մէջ, որպէսզի արիւնքն ու նորոգեալ կամքով դարձեալ քայլեր Աւետարանի ուղիներէն եւ Յարութեան Տէր հռչակելով կանգուն պահենք մեր հաւատքն ու կեանքը:

Անկասկած, անկումային ներկայ պայմաններուն մէջ, լուսեղէն այգաբացի խորհուրդ մը պետք է բացուի մեր դիմաց, որպէսզի մեր ժողովուրդը իր կրած նոր գովազներուն ու ահաւոր դառնութիւններուն դիմաց, յանուն իր երազներուն ու լուսեղէն այգաբացի, դարձեալ լեղաշրջէ իր վիճակը ու յուսահատիլ չգիտցող կամքով նոր թռիչք տայ իր այրումներուն ու երազներուն:

Ահաւասիկ, Չատիկ է դարձեալ մեր կեանքէն ներս եւ, հետեւաբար, պարտինք հոգեկան ճիգով աստուածամերձ վիճակի մէջ պահել մեր հոգին, որպէսզի քրիստոնէական հաւատքի ներգործութեամբ կարենանք վերադասարարել մեր առաջնահերթութիւնները ու նոր հոգածութեան արժանացնել մեր անհատական, ընտանեկան ու համայնական կեանքը, եւ մէկ միասին աշակիցն եւ գօրակից մնալով վերստին կենդանալով մեր եկեղեցւոյ հաւատքին, մեր ազգային տեսիլքներուն ու իրաւունքներուն մէջ, եւ մեր նուիրումով յաղթական շուք տարածել աշխարհագրի մեր ժողովուրդի կեանքէն ներս, որպէսզի բոլորս միասին մասնակցութեամբ մեր հաւատարիմ մեր արդար իրաւունքներու ձեռքբերման պարտականութիւններուն մէջ:

Ս. Յարութեան տօնին առիթով, սրտանց կ'ողջունենք եւ կը շնորհալուրենք լիբանանահայ մեր քոյր յարանուանութիւնները, թեմիս հոգեւորականաց դասը, Ազգային իշխանութիւնն ու ժողովականութիւնը, մեր եկեղեցիներու, վարժարաններու, համայնական մեր կեանքէն ներս գործող կառոյցներու ու կազմակերպութիւններու պատասխանատուները ու մեր սիրեցեալ ժողովուրդին բոլոր գաւազները, եւ մաղթենք, որ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Ս. Յարութեան տօնը պայծառացնէ բոլորին կեանքը եւ մեզ հաւաքաբար տանի յարութեան տեսիլքին: Քրիստոս յարեալ ի մեռելոց: Օրհնեալ է յարութիւնը Քրիստոսի:

Շահէ Արք. Փանոսեան
Առաջնորդ Հայոց Լիբանանի

ՎԵՐԱՊԱՏՈՒԵԼԻ ՓՈԼ ՀԱՅՏՕՍԹԵՆ
ՄԱՐԱԵՄԻ ԱՆԱԿԱՌԿԻ ՏԵՂԱԳԱՐ

«ՆՄԱՆ ԱՅՅԵՐԸ ՄԵԾ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻՆ».

ԱԼԷՆ ՍԻՄՈՆԵԱՆՆ ԸՆԴՈՒՐԱԾ Ե ՖՐԱՆՍԱԿԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնեան ընդունած է Ֆրանսայի Հանրապետության Ազգային ժողովի Ֆրանսա-Հայաստան բարեկամական խումբի ղեկավար Ան-Լորան Փեթելի գլխավորած պատուիրակությանը:

Հանդիպման սկիզբը Ալեն Սիմոնեան շնորհակալություն յայտնած է Ֆրանսացի գործընկերներուն Հայաստան այցելության համար եւ նշած, որ նման այցերը մեծ քաղաքական եւ անվտանգային նշանակություն ունին:



Ան-Լորան Փեթելը բարձր գնահատած է Հայաստանի հետ հաստատուած միջխորհրդարանական յարաբերությունները եւ ընդգծած, որ մեծաքանակ բարեկամական խումբի կազմին մէջ ներկայացուած են բոլոր խմբակցութիւններուն ներկայացուցիչները, որոնք ունին Հայաստանին աջակցութեան վերաբերեալ համախոհութիւն:

Անդրադառնալով Հայաստան-ԵՄ համագործակցութեան կողմերը ընդգծած են յարաբերութիւններու զարգացման դրական յարաշարժութիւնը:

«Հայաստանը խորապէս կը կարեւորէ ԵՄ դիտորդական առաքելութեան տեղակայումը Հայաստան-Ատրպեյճան սահմանին: Այն մեծ նշանակութիւն ունի տարածաշրջանին մէջ խաղաղութեան եւ անվտանգութեան հաստատման հարցով», նշած է Աժ նախագահը:

Ալեն Սիմոնեան ֆրանսացի գործընկերներուն ներկայացուցած է Հարաւային Կովկասի մէջ առկայ անվտանգային իրավիճակը, Լեռնային Ղարաբաղէն տեղահանուած անձերու մարդասիրական խնդիրները, Ատրպեյճանի մէջ պահուող հայ ռազմագերիներու վերադարձին հարցը:

Ընտանրկուծ են Հայաստան-Ֆրանսա համագործակցութեան զարգացման հեռանկարները միջխորհրդարանական, ինչպէս նաեւ անվտանգային, տնտեսական եւ այլ ոլորտներու մէջ:

Հանդիպման մասնակցած է նաեւ Հայաստան-Ֆրանսա բարեկամական խումբի ղեկավար Վլադիմիր Վարդանեանը:

ՀԱՊԿ ԳԼՆԱԿՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐՆ ԸՆԴՂԾՆԸ Է, ՈՐ ՀԱՅՏԱՏԱՆԸ ԿԸ ՄՆԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԳԼՇՆԱԿՈՒՅԸ

Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան գլխավոր քարտուղարը յայտնած է, որ Հայաստանը կը մնայ կազմակերպութեան դաշնակիցը եւ միեւնոյն ժամանակ յանձնար, որ ՀԱՊԿ-ը Հայաստանի ղեկավարութեան կողմէ քաղաքական սթափութիւն կ'ակնկալէ:



ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Իմանուիլ Թասմաղամպեթովը նման կարծիք յայտնած է «Նազիտալայա Օպորնա» ամսագրին տուած հարցազրոյցին մէջ:

«Մենք Հայաստանի ղեկավարութեան կողմէ կ'ակնկալենք քաղաքական սթափութիւն եւ կազմակերպութեան հետ կապուած տարբեր բնագործու իրականացման հեռանկարներու հաւասարակշռուած գնահատական: Ընդգծեմ, որ Հայաստանը կը մնայ մեր դաշնակիցը, գործող բոլոր պարտաւորութիւնները կը մնան ուժի մէջ», նշած է քարտուղարը՝ անդրադառնալով հարցին, թէ արդեօք ՀԱՊԿ-ի մէջ կը սպասե՞ն կազմակերպութեան անդամակցութեան դադորման վերաբերեալ Հայաստանի կողմէ յայտարարութեան:

Իմանուիլ Թասմաղամպեթով յայտնած է, որ ինչպէս ինքը, այնպէս ալ քարտուղարութիւնը կ'աշխատին կազմակերպութիւնում ընդունուած կանոնակարգերուն եւ ընթացակարգերուն համապատասխան:

«Մենք, բնականաբար, մեր վերլուծաբաններուն եւ անոնց հասանելի գործիքակազմին ուժերով կը վերլուծենք իրավիճակը Հայաստանի շուրջ եւ իրավիճակը Հայաստանի ու կազմակերպութեան փոխյարաբերութիւններուն մէջ», ըսած է Թասմաղամպեթով:

ՎԱՂԱՐԾԱԿԸ ԱՂ ՎԱՅ Է...

Վաղարշակը ու՞ր տարեկան պատանի մըն է: Ան ծնած է Պանկըղը, Հնդկաստան: Վաղարշակը հնդիկ է արտաքին տեսքով, բայց էութիւնը, ինքնութիւնն ու փոքր տարիքին անոր համար տընիլը արդէն ուրիշ բան է:

Պանկըղ, Հնդկաստան, Փետրուար 2024:



Մայք Ստեփանը ծնած է Պանկըղը, անոր մայրն ու մեծ մայրը հայ են՝ ծնած Կալկաթա: Մայքին մորենական ընտանիքի արմատները եղած են Ջուզայէն, Պարսկաստան, երբ Շահ Ափաս մեծաթիւ հայեր հաստատած է հին: Մայքին մայրը ամուսնացած է հնդիկի մը հետ եւ ընտանիք կազմած՝ Պանկըղի մէջ: Հայրը փոքր տարիքէն լքած է ընտանիքը եւ հեռացած՝ միակ թողելով իր հայ կողակիցը եւ երեք զաւակները:

Մայք, իր քոյրն ու եղբայրը մեծցած են իրենց մօր եւ մեծ մօր խնամքին տակ՝ հայկական շունչով: Մայք նաեւ ստացած է իր մօր մականունը՝ Ստեփան, որ ա՛լ աւելիով զինք նայնուցած է հայկական ինքնութեան հետ: «Հնդկաստանի մէջ հայեր անգլիացուցին իրենց մականունները», կ'ըսէ Մայք ու կը շարունակէ. «Ասիկա ըրին, որպէսզի աւելի դիւրին ըլլան ընկերային յարաբերութիւնները եւ Ստեփանեանը դարձաւ Ստեփան»:

1981-ին Մայքը եւ իր ընտանիքը Պանկըղից եկած են Կալկաթա, եւ հոն հայոց Մարդասիրական ճեմարանին մէջ Մայք ստացած է ուսում, նաեւ՝ հայեցի դաստիարակութիւն: «Մայրս 1955-1963 տարիներուն աշակերտած է Մարդասիրական ճեմարանին: Ես ալ հոն հայերէն սորված եմ», ըսաւ Մայք: «Հայերէնի ուսուցիչ չունէիք եւ տեղացի հնդիկ ուսուցիչ մը մեզի հայերէն կը սորվեցներ», շարունակեց Մայք:

Հնդկաստանի հայկական գաղութի նստրացումը չէ օգնած, որ Մայք եւ իր ընտանիքը հմտանան իրենց քիչ մը սորված հայերէնին մէջ: «Մայրս քիչ մը հայերէն կը խօսի», ըսաւ Մայք: - Ես միայն քանի մը բառեր կը յիշեմ: Կարելիութիւն չէր, խօսելու եւ դժբախտաբար սորվածս ալ մոռայ»: Մայքի դեմքին վրայ կը տեսնէ ծայր մը, որուն ետին նոյնքան ակներեւ էր տխրութիւնը:

Մայք Ստեփան քանի մը տեսակ աշխատանքներ ըրած է իր կեանքին ընթացքին: Ան մեծ հրճուանքով կը յիշէ իր լման ժամանակով վարչական պատասխանատուութիւն ստանձնելը Զենայի (Մատրասի) հայկական եկեղեցւոյ՝ 1994-2005 տարիներուն: «Զենա երբ կ'ապրէի, շատ կը կարդայի հայուն պատմութեան մասին», ըսաւ Մայք: - Եկեղեցիին համար գործելու մեծապէս օգնեց, որպէսզի աւելիով կառչիմ հայկական ինքնութեանս»:

Մայք 2005-ին եկած է Կալկաթա եւ աշխատած է Մարդասիրական ճեմարանին մէջ, ուր շատ աւելիով առնչուած է հայ աշակերտութեան հետ, որոնք եկած էին Հայաստան:

ՀԱՅԱՏԱՆԻ ՄԷՋ ԱՆՏԱՆԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԼԵՌՆԱՅԻՆ ԳԱՐԱԲԱՂԱՅԻՆ ՏԵՂԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԾՈՐԻՋ 12 ՀԱԶԱՐ ԱՆՁ

Հայաստանի մէջ աշխատանքի ընդունուած են Լեռնային Ղարաբաղէն բռնի տեղահանուած բաւականին մեծ թիւով անձեր:

Կառավարութեան նիստին այս մասին ըսաւ վարչապետ Նիկոլ Փաշինեանը:



«Պէտք է արձանագրենք, որ այս ընթացքին Լեռնային Ղարաբաղէն բռնի տեղահանուած բաւականին մեծ թիւով մեր քոյրեր եւ եղբայրներ Հայաստանի մէջ աշխատանքի ընդունուած են:

Վերջին տունալներուն համաձայն՝ Լեռնային Ղարաբաղէն բռնի տեղահանուած են Հայաստանի մէջ աշխատանքի ընդունուած անձերուն թիւը կ'անցնի 11 հազար 800-էն: Մենք այս գործընթացը պէտք է քաջալերենք», ըսաւ Փաշինեանը:

Կառավարութեան ղեկավարին խօսքով՝ Լեռնային Ղարաբաղէն բռնի տեղահանուած դպրոցահասակ տարիքի գրեթէ բոլոր երեխաները տեղաւորուած են Հայաստանի դպրոցներուն մէջ:

յաստանէն եւ Միջին Արեւելքի կարգ մը երկիրներէ: «Մինչեւ այսօր տակաւին կապի մէջ եմ աշակերտներուն հետ», ըսաւ ան:

Հետաքրքրական էր լսել Մայքի կեանքին անցած ճանապարհը եւ իր ինքնութեան փնտռումները: Զուշացաւ հարցումս. «Հնդիկ, թե՛ հայ կը զգաս»:

«Հարիր առ հարիր հայ», եղաւ պատասխանը:

Մայք երախտապարտ է հայ դպրոցին ու հայ եկեղեցւոյ, անոնց մէջ կը տեսնէ հայկական ինքնութեան կերտումը եւ շարունակականութիւնը: «Հայ դպրոցը եւ եկեղեցին շատ կարեւոր դեր ունեցան հայկական ինքնութեան կերտումին մէջ», ըսաւ Մայք: - Երախտապարտ եմ եւ անոր համար ալ ամուր կերպով փարած եմ մեր հաստատութիւններուն»:

Հայկական գաղութը Հնդկաստանի մէջ եւ պատմութեան ընթացքին՝ 16-րդ դարերէն սկսեալ, ունեցած է բարգաւաճ վիճակ: «1950-ական տարիներուն երեք հազար հայութիւն կար: Այսօր մնացած է երկու հարիւր, որուն յօտաւորապէս եօթանասունը դպրոցի աշակերտներն են՝ եկած Հայաստանէն: Աշակերտներէն գատ՝ նաեւ ունիք քանի մը հայեր, որոնք Հայաստանէն եկած են եւ տեղացիներու հետ ամուսնացած», տեղեկացուց ան:

Մայք Ստեփան չորս տարբեր առիթներով այցելած է Հայաստան: «Ծիծեռնակաբերդ այցելութիւնս մէջս ստեղծեց Ցեղասպանութեան ահաւորութիւնը», ըսաւ Մայք:

Ան նոյնպէս կը տազանապի Արցախի կորուստով եւ աւելի քան 120.000 հայորդիներու տեղահանութեամբ: «Շատ դժուար է ընդունիլ այս իրողութիւնը», ըսաւ ան:



Հնդկաստանի անկախութենէն ետք՝ 1947-ին, մեծ թիւով հայեր ձգած են Հնդկաստանը եւ գաղթած՝ տարբեր երկիրներ: «Աւելի լաւ ապագայ մը կ'ուզէին ունենալ», ըսաւ Մայք: Բայց Մայք եւ իր ընտանիքը մնացած են Հնդկաստան, հոն մնալուն մէջ նաեւ կայ հայ մնալու գոյապայքարը: «Զկրցայ հայ առջկայ մը հետ ամուսնանալ: Մէկը չուզեց Հնդկաստան գալ: Ստիպուած եղայ ամուսնանալ տեղացիի մը հետ», եղաւ Մայքի հայկական ուղեւորութեան մէկ այլ շրջան: Անկախ այն իրականութենէն, որ Մայքին հայրը եւ կողակիցը հնդիկներ են, Մայք Ստեփան գորաւոր ու տոկոսն հայն է: Հայերէն չի խօսիր, բայց հեռուոր Հնդկաստանի մէջ անոր սիրտը կը տրոփէ հայութեամբ: «Յաճախ տարբեր առիթներով հայութեան մասին կը խօսիմ», ըսաւ Մայք հպարտ ժպիտով մը: - Պէտք է մեր պատմութիւնը եւ մշակոյթը ծանօթացնել օտարներուն»:

Մայք Ստեփան իր սրտին վրայ ունի մէկ ճնշուածութիւն մը՝ անկատար առաքելութիւն մը, որ կ'ուզէ իրականացնել:

Մայքին եղբայրը եւ քոյրը մկրտուած են հայկական եկեղեցւոյ մէջ՝ Կալկաթա: Մայք ծնած է Պանկըղը, ուր հայկական եկեղեցի չկար: Ան մկրտուած է ոչ-հայկական եկեղեցւոյ մը մէջ: Ան այսօր կ'ուզէ իր ու՞ր տարեկան զաւակը՝ Վաղարշակը, հայկական եկեղեցւոյ մէջ մկրտել: Մինչեւ օրս հայկական եկեղեցին համաձայն չէ փոքրիկ Վաղարշակը մկրտել, որովհետեւ հայրը՝ Մայքը, հայկական եկեղեցւոյ մէջ չէ մկրտուած:

«Զեմ յուսահատած: Օր մը Վաղարշակը հայ եկեղեցւոյ մէջ պիտի մկրտեմ», ըսաւ Մայք՝ հաստատ եւ վճռական:

Մայք Ստեփան կը գիտակցի, որ Հնդկաստանի մէջ հայ մնալը դիւրին չէ, եւ որ ատիկա մեծ զոհողութիւններ կ'ենթադրէ: Բայց այսօր սփիւռքեան ո՞ր իրականութեան մէջ հայ մնալը դիւրին է:

Մայք իրապաշտ մարդ է: Գիտէ եւ կը տեսնէ, թէ մնացած քանի մը հայերը ինչպէ՞ս պիտի լուծուին տեղական համայնքին մէջ: «Ինչ որ ալ ըլլայ վիճակը, պիտի պահենք մեր հաւատքը եւ մշակոյթը», ըսաւ Մայք: Ան նաեւ չի մոռար յաճախ կրկնելու եւ յիշեցնելու իր ու՞ր տարեկան զաւակին. «Վաղարշակ հայկական անուն է, երբեք չմոռնաս»:

Մայք ո՞չ մէկ ճիգ կը խնայէ, որպէսզի իր հայկական ինքնութիւնը պահէ հեռուոր Պանկըղի մէջ: Ան «մէկ հոգիով հայկական բանակ» մըն է, որ կը փորձէ իր հայապահպանումի պատերազմը տանիլ՝ իր ինքնութիւնը եւ մշակոյթը պահելու համար: Ան ո՞չ միայն իր պատերազմը կը մղէ, այլ նաեւ իր ու՞ր տարեկան զաւակին՝ Վաղարշակին ալ:

Մայք այն հայն է, որ ամէն ինչ կ'ընէ, որպէսզի Վաղարշակն ալ հայ մեծնայ:

Զեմ գիտեր, եւ ներկայ օրերու տունալներէն մեկնելով, ինչպէ՞ս պիտի կարենանք սփիւռքահայ իրավիճակներուն մէջ սահմանել ազգային ինքնութեան եւ անոր պատկանելիութեան բնորոշիչները եւ գտնուել կարենալ գտնուել հասարակաց ենթահողի մը վրայ: Ինչպէ՞ս այդ հասարակաց ենթահողին մէջէն պիտի կարենալ բնութագրել սփիւռքահայուն եւ կամ հայուն դիմագիծը:

Միջց այդ, հեռուոր Պանկըղի մէջ կայ ու՞ր տարեկան պատանի Վաղարշակը, որ կը փորձէ հայ մեծնալ: Ան այս պայքարը կը փորձէ մղել առանց հայկական դպրոցի, եկեղեցւոյ եւ շրջանակի: Կը մեծնայ առանձին՝ որպէս հայ:

Վաղարշակին մեծնալուն հետ պիտի տեսնենք եւ ընդունինք, որ Վաղարշակն ալ հայ է:

Ու տակաւին՝ բոլոր իրեն նման Վաղարշակները:

ԱՐԱՐԱՏ ՔՂԿՈՒՆ

Ա Յ Ս Օ Ր

Հ.Ս.Ս. - ԱՆ ՀԻՆԱԼ

ԺԱՍՆ 15:00,

ԱՆ ԱՐՇՏ ՄԱՐՁԱԴԱՇՏ

ԵՐՈՊԱՅԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ ՓԼԷՅ-ՕՖԻ ՄԱՐՏ.

ԼԵՅԱՍԱՆ, ՈՒԵՐԱՆԻՎ ԵՒ

ՎՐԱՍԱՆ ՅԱՂԹԵՑԻՆ

Երեքշաբթի երեկոյան տեղի ունեցան Երոպայի պիտո-եանութեան փլէյ-օֆի մրցումները խմբակներուն երրորդ դիրքերը գրաւած հաւաքականներուն միջեւ: Փլէյ-օֆի ա-լարտական փուլին մրցեցան վեց հաւաքականներ: Յաղ-թող երեք հաւաքականները պիտի միանան աւարտական մրցաշարքի 21 հաւաքականներուն: Առաջին մրցումին, Զարտիֆի մէջ մրցեցան կալէսի եւ Լեհաստանի հաւաքա-կանները: Հաւասարակշռուած մրցումին հիմնական ժա-մանակը աւարտեցաւ առանց կողերու: Երկարաձգումն ալ տարբերութիւն չմտցուց հաշիւին մէջ ու տուգանային հարուածներով յաղթեցին լեհերը ու հասան աւարտական մրցաշարք: Երկրորդ մրցումին, Ուքրաինոյ հաւաքականը մրցեցաւ Իսլանտայի դէմ, Լեհաստանի Վրոցլավ քաղաքի մարզադաշտին վրայ: Թէեւ Ուքրաինա ուներ որոշ առաւե-լութիւն, սակայն Իսլանտա պայքարող հաւաքականն էր: Մրցումի 30-րդ վայրկեանին, «Ճենովա»ի յարձակող Կուտ-մունտսոն նշանակեց Իսլանտայի կողը, կիսապաշտպան Զարալտսոնի փոխանցումով: Սակայն, «Ճիրոնա»ի յար-ձակող Յիլկանով 54-րդ եւ «Չելսի»ի կիսապաշտպան Մուտրիք 84-րդ վայրկեաններուն հաշիւը դարձուցին 2-1 ի նպաստ Ուքրաինոյ, կիսապաշտպան Սուտաքովի երկու

փոխանցումներով: Ուքրաինա յաղթեց եւ անցաւ աւար-տական մրցաշարք: Իսկ վերջին մրցումին, Վրաստանի հաւաքականը մրցեցաւ Յունաստանի դէմ, Թաիլիսիի մարզադաշտին վրայ: Հաւասարակշռուած մրցումին հիմ-նական ժամանակը աւարտեցաւ առանց կողերու հաւա-սարութեամբ: Տուգանային հարուածներով յաղթանակ տարաւ Վրաստանի հաւաքականը ու անցաւ աւարտա-կան մրցաշարք: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնք-ները:

- Ա.շարք. - Կալէս - Լեհաստան 0-0 տուգ. 4-5
- Բ.շարք. - Ուքրաինա - Իսլանտա 2-1
- Գ.շարք. - Վրաստան - Յունաստան 0-0 տուգ. 4-2:

ՄԵՐԶԱԻՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ
ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ

Սբ. Յարութեան Տօնին առիթով, Մերձաոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Լախազահի Տեղապահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսեան եւ Կեդրոնական Մարմինը, շնորհատրութիւններ պիտի ընդունին Կիրակի, 31 Մարտ, 2024, կէսօրուան ժամը 12.00-էն մինչև կ.ե. ժամը 2.00, Հայ Աւետարանական Առաջին Եկեղեցոյ ընդունելութեանց դահլիճին մէջ, Մերսիք փողոց, Պէյրութ:

Մ.Ա.Ն.Ա.Ե. Միութեան
Կեդրոնական Մարմին
ԴԻՒԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ Ս. ՉԱՏԿՈՒՄՆ ՊԱՏԳԱՍԸ

(Շարունակուած Ա. էջէն)

ու Զրիստոսի միացած մարդեր: Հետեւաբար, Զրիստոսի միանալով, ինչպէս իր հետ թաղուեցանք, նոյնպէս իր հետ յարութիւն կ'առնենք հոգեւորապէս, իսկ Զրիստոսի երկրորդ գալուստին, մեռելներէն՝ մարմնապէս: Արդարեւ, յարուե-լու Զրիստոս համայն մարդկութեան կը ներկայանայ **"որ-պէս առաջին օրինակ մեռելներու յարութեան"** (Ա.Վր 15:20):

Հորրորդ, **Զրիստոսի յարութիւնը յիշեցնում է ուղղուած մեր ժողովուրդին:**

Յիշեցում՝ որ Զրիստոսի յարութեան առաջին հաւա-տացող ժողովուրդը եղանք: Յարութեան հաւատքը մեր կեանքին հետ շարախեցինք: Անով հզօրացած դիմագրա-ւեցինք պատմութեան հալածանքները ու ցեղասպանու-թիւնները: Անով պայծառակերպուած ստեղծեցինք ու վերստեղծեցինք, շինեցինք ու վերաշինեցինք՝ հակառակ մեզ շրջապատող դժբախտ պայմաններուն: Անով գօ-տեպնդուած վերականգնեցանք ու վերակազմակերպուե-ցանք եւ վերակերտեցինք մեր հայրենիքը: Զրիստոսի յարութիւնը եղաւ մեր տառապալից կեանքը յարութեան շունչով ու ոգիով, հաւատքով ու տեսլականով հզօրացնող երկնային ուժ:

Հինգերորդ, **Զրիստոսի յարութիւնը նաեւ պատգամ է ուղղուած մեր ժողովուրդին:**

Պատգամ՝ հաւատարիմ մնալու Զրիստոսի յարութեան խորհուրդին եւ զայն իրենց հաւատքի կեանքով ու առա-ջելութեամբ թարգմանած մեր հայրերու սրբազան կտա-լին: Նաեւ հեռո՛ւ մնալու քրիստոնէական արժեքները նսե-մացնող կենցաղակերպերն ու գործելակերպերը: Հեռո՛ւ վանելու մեզ շրջապատող չարերն ու չարիքները: Պատ-գամ՝ մերժելու խաւարը ու բացուելու լոյսին, մերժելու վիատութիւնը ու փարելու յոյսին, մերժելու մահը ու կառ-չելու կեանքին: Արդ, սիրելի՛ հայրողիներ, գիրար ողջու-նենք մեզ շրջապատող տագնապները հաւաքաբար յաղ-թահարելու յարութեան հաւատքով: Չիրար ողջունենք Զրիստոսի յարութեան յաղթանակին մասնակից դառնա-լու յանձնառութեամբ, ինչպէս զարբեր շարունակ մասնա-կից դարձանք Զրիստոսի խաչի ճանապարհին: Զմոռանք երբեք, որ **"Զրիստոս մեզի համար մեռաւ, որպէսզի մենք իրմով կենդանի ըլլանք"** (Ա. Թս 5:10):

ԱՐԱՐԱՏ ՏՆՈՒՆԱԿԱՆ

(Շարունակուած Գ. էջէն)

ցերն են անշարժ գոյքի ընկերութիւններու պարտքի կու-տակումը, երկրին պարտքին չափը եւ գիներու անկումը պահանջարկի նուազումին պատճառով:

սինքն այն գործօնը որ յենարանն էր տնտեսութեան՝ սպառումը, պիտի նուազի ու տնտեսութիւնը մեծ հաւա-նակաւորութեամբ պիտի բռնէ անկումի ճամբան:

ԵՐՈՊԱ ՌՈՒՄԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ

Անցեալ շաբաթ Ռուսական Դաշնութիւնը, նկատի առ-նելով Միացեալ Թագաւորութեան վարած հակառակ քա-ղաքականութիւնը, որոշեց ջնջել այն համաձայնագիրը, որ կար երկու երկիրներուն միջեւ Խորհրդային միութեան օրերէն, որ իրաւունք կու տար Թագաւորութեան ձկնոր-սութիւն կատարելու Խաղաղական ովկիանոսի հիւսիսա-յին մասին մէջ գտնուող Պարենցի ծովուն մէջ: Համաձայ-նագիրը կնքուած էր 1956 թուականին: Անցեալ տարի Թագաւորութիւնը 560 հազար թոն ձուկ որսացած էր այդ շրջանին մէջ: Մարտ 2022-ին Միացեալ Թագաւորութիւնը Ռուսական Դաշնութիւնը վերցուցած էր յարգուած երկիր-ներու ցանկէն:

Գերմանիոյ կառավարութիւնը սահմանափակելու հա-մար իր ծախքը որոշեց դադարեցնել օժանդակութիւնը, որ կը տրամադրէր միջին եւ փոքր չափի ընկերութիւններուն անոնց օգտագործած ուժանիւթի ծախքը զեղչելով: Այս քայլը պիտի վտանգէր Գերմանիոյ փոքր եւ միջին չափի ճարտարարտօտական ընկերութիւնները, որոնք կը կազ-մեն ողնայարը երկրի տնտեսութեան: Երեք միլիոնի հաս-նող այդ ընկերութիւններէն մաս մը ներկայիս կը գտնուի ծանր վիճակի մէջ: Երոպական միութեան հաստատած օրէնքները, պահանջարկի անկումը եւ ժառանգորդներու որոշումը չստանձնելու իրենց ընտանեկան ընկերութեան տնտեսութիւնը հիմնական պատճառներն են այդ տագ-նակալիս:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԱՐԿ ՊՐԻԶՄ-Ի ԴՐԱՍԱՆԻՇԸ

ՊՐԻԶՄ տնտեսական համախմբումի երկիրները սկսած են հողովոյթը ԱՄՆ տալարին դիմաց հաստատելու համար իրենց դրամահիշը: Դրամահիշը պիտի ըլլայ թուայնաց-ւած, այսինքն ոչ թղթադրամ: Այս մասին յայտնեց Ռուսա-



կան Դաշնութեան նախագահի արտաքին յարաբերու-թեան խորհրդականներէն Եուրի Ուշաքով: Նոր դրամահի-շը պիտի ըլլայ անկախ անոյսմ երկիրներու քաղաքական ծրագրերէն ու պիտի ունենայ իր ուրոյն փոխարժեքի հա-մակարգը:

Ըստ Ուշաքովի, 2024 տարին պիտի ըլլայ ՊՐԻԶՄ-ի դրամական համակարգի կայացումի տարի: Այս դրամա-նիշը պիտի օգտագործուի որպէս պահեստի եւ առեւտու-րի դրամանիշ, մասամբ փոխարինելով ԱՄՆ տոյարը: Այս դրամանիշով պահեստը պիտի օգտագործուի անոյսմ եր-կիրներու մօտ դրամական տագնապի պարագային որ-պէս ռազմավարական պահեստ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ ՏՈՒՐՔ (Income tax, Indirect taxation)

Տուրքը պետութեան եկամտի ամենամեծ աղբիւրն է: Ան կը գանձուի ուղղակի եւ անուղղակի միջոցներով: Ուղ-ղակի տուրքը կը գանձուի պաշտօնեայէն՝ իր աշխատա-վարձէն զեղչելով: Կը գանձուի ընկերութիւններէն՝ անոնց եկամուտէն որոշ տոկոս մը նկատի առնելով: Այս տոկոսը կը տարութեւ 10-էն 20 առ հարիւրի միջեւ: Անուղղակի տուրքը կը գանձուի երբ սպառողը գնում կը կատարէ իրենց մը: Իւրաքանչիւր պարանքի արժեքէն տոկոս մը կը հաշուեն որպէս տուրք: Value Added Tax-ը կը պատկա-նի այս դասակարգին: Կառավարութիւններ կան որոնք տուրքը կը գանձեն բոլորէն, հաւասար տոկոսով: Իսկ այլ կառավարութիւններ կ'որոշեցնեն տուրքի աստիճանական յաւելումի քաղաքականութիւնը: Այսինքն տուրքին տոկո-սը կ'աւելան քաղաքացիի շահած գումարին համեմատ: Ցած աշխատավարձ ունեցող պաշտօնեան ատելի քիչ տուրք կը վճարէ քան ատելի բարձր աշխատավարձ ունեցողը:

ԱՄԵՐԻԿԱ ՀԱՅԻԹԻ ԾԱՆՐ ՎԻՃԱԿԸ

38 տարի առաջ Տիւվալիէ ընտանիքը հեռացուցաւ իշ-խանութենէն Հայիթի պետութեան մէջ: Այդ թուականէն ի վեր այդ պետութիւնը չգտաւ իր անդորրը: Յուլիս 2021-ին նախագահ ժողովէն Մոյիզ ահաբեկուեցաւ նախագահա-կան պալատին մէջ: Ներկայ վարչապետը կը գտնուի Փոր-թօ Ռիքոյի մէջ եւ կը վախճայ վերադառնալու երկիր: Եր-կիրը կը տառապի սնօրէնութենէ: 11,5 միլիոն բնակիչ ու-նեցող երկրի ընդհանուր արդիւնքը (Gross Domestic Pro-duct) կը հասնի 2,2 միլիարդ ԱՄՆ տոյարի եւ ան կը հա-մարուի Աշխարհի ամենաղքատ երկիրներէն մէկը: Եր-կիրը ե՛րբ պիտի փրկուի այս վիճակէն. կը մնայ մեծ հար-ցում մը եւ ան կախեալ է ժողովուրդի կամքէն ու ղեկա-վար փրկող դեմքի մը բացակայութենէն:

ԱՄՆ ՄԱՐԾԸ ԿՏԱՆԳԱՎՈՐ ԳՈՐԾՈՒ

Սղաճի զսպումը կը տեսնուի երկար ժամանակ: Կեդրոնա-կան դրամատունը պիտի սպասէ մինչեւ Յունիս ամիս պարտքի տոկոսի առաջին նուազումը կատարելու հա-մար: Այս ժամանակամիջոցին պարտքի բարձր տոկոսը պիտի ունենայ իր ժխտական ազդեցութիւնը տնտեսու-թեան վրայ: Երկրորդ գործօն մը, որ կը յոգնեցնէ ամերի-կացիները, պարտքի տրուած դրամի նուազումն է: Դրա-մատուներ սկսած են որդեգրել դրամ փոխ տալու շատ խիստ պայմաններ: Նուազած է այն մարդոց թիւը, որոնք կրնան պարտքի դրամ առնել քարտի ընկերութիւններէն: Այս նուազումը իր ժխտական դերը պիտի ունենայ տնտե-սական աճին մէջ: Երբ մարդիկ քիչ դրամ ունին եւ չեն կրնար պարտքով գնել, սպառումը պիտի նուազի: Այ-

Սորբ 2առիկ 2024
Անթիլիաս, Լիբանան

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տիկին Չապէլ Պոյաճեան եւ դստերը՝ տեր եւ տիկին Օմար եւ Թամար Էլէյլաթ, տեր եւ տիկին Յարութիւն եւ Կարինէ Տումպալեան, շնորհակալութիւն կը յայտնեն Ս.Գ.Հ.Կ. Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինին, Ս.Գ.Հ.Կ. «Փարամազ» մասնաճիւղի վարչութեան, Ս.Գ.Հ.Կ. «Մարո Նազարբէկեան» մասնաճիւղի վարչութեան, Հ.Ս.Ս. Կեդրոնական վարչութեան, «Արարատ» օրաթերթին, եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ, հեռաձայնով, ե-նամակով կամ այլապէս մասնակից եղան իրենց ամուսնոյն եւ հօր՝ ՍՈՒՐԱՏ ՊՈՅԱԾԵԱՆԻ մահուան սուգին:

BOGHOS OPTIC

Autoroute Jdeideh,
Tel.: 01-870016

ARARAD DAILY NEWSPAPER
MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradorart@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمنية | المحررة المسؤولة: أني صرافيان
تصدر عن شركة مسيسر للمباعة والنشر (ش.م.م.)

Աղբիւրներ՝ «Տը Էքոնոմիսթ», «Ռաշա Թուսէթ», «Եւրասիանթ.օրկ» եւ «Ալ Տիյար»